

ԿՈՆՎԵՆՑԻԱ 98

ԿՈՆՎԵՏԻՎ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ՎԱՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 1.

1. Աշխատավորները օգտվում են աշխատանքի բնագավառում միավորման ազատության սահմանափակմանը ուղղված խտրականությունից պատշաճ պաշտպանվելու իրավունքից:
2. Այդպիսի պաշտպանությունը կիրառվում է մասնավորապես այնպիսի որժողությունների նկատմամբ, որոնց նպատակն է՝
 - ա) աշխատողին աշխատանքի ընդունելը այն պատճառով, որ նա չմիանա որևէ միության կամ դուրս գա արհմիության անդամակցությունից,
 - բ) աշխատողին աշխատանքից հեռացնելը կամ այլ միջոցներով վնաս հասցնելը՝ այն հիմնավորումով, որ նա հանդիսանում է արհմիության անդամ կամ մասնակցում է արհմիության գործունեությանը ոչ աշխատանքային ժամերին կամ ձեռնարկատիրջ համաձայնությամբ՝ աշխատանքային ժամերին:

Հոդված 2.

1. Աշխատավորների և ձեռնարկատերերի կազմակերպությունները օտվում են միմյանց կամ իրենց անդամների կամ գործակալների կողմից իրենց ստեղծման, գործունեության և կառավարման միջամտության ցանկացած գործողությունների դեմ ուղղված պատշաճ պաշտպանությունից:
2. Մասնավորապես այն գործողությունները, որոնք նպատակ ունեն օժանդակելու ձեռնարկատերերի կամ ձեռնարկատերերի կազմակերպությունների իշխանության ներքո գտնվող աշխատավորների կազմակերպությունների հաստատմանը կամ աջակցելու աշխատողների կազմակերպությանը ֆինանսական կամ այլ միջոցներով՝ նպատակ ունենալով այդպիսի կազմակերպություններին դնել ձեռնարկատերերի կամ ձեռնարկատերերի կազմակերպությունների հսկողության տակ, սույն հոդվածի իմաստով դիտվում են որպես միջամտություն:

Հոդված 3.

Կազմակերպու իրավունքը հարգելու ապահովման նպատակով, այնտեղ, որտեղ անհրաժեշտ է, երկրի պայմաններին համապատասխան, ստեղծվում է ապարատ, ինչպես այն սահմանված է նախորդ հոդվածներում:

Հոդված 4.

Աշխատանքի պայմանների կարգավորումը կոլեկտիվ պայմանագրերի կնքման ճանապարհով իրականացնելու համար, այնտեղ, որտեղ դա անհրաժեշտ է, երկրի պայմաններին համապատասխան, միջոցներ են ձեռնարկվում մի կողմից ձեռնարկատերերի կամ ձեռնարկատերերի կազմակերպությունների և մյուս կողմից աշխատավորների կազմակերպությունների միջև կամավորության հիման վրա վարվող

բանակցությունների գործընթացի լրիվ զարգացումը և օգտագործումը աջակցելու և խրախուսելու նպատակով:

Հոդված 5

1. Երկրի օրենսդրությամբ որոշվում է, թե սույն Կոնվենցիայով նախատեսված երաշխիքներն ինչ չափով կկիրառվեն զինված ուժերի և ոստիկանության նկատմամբ:

2. Աշխատանքի միջազգային կազմակերպության կանոնադրության հոդված 19-ի կետ 8-ում շարադրված սկզբունքներին համապատասխան Կազմակերպության որևէ անդամի կողմից սույն Կոնվենցիայի վավերացումը չի կարող դիտվել որպես գոյություն

ունեցող այն օրենքները, դատական որոշումները, սովորույթները կամ համաձայնագրերը շոշոփող գործողություն, որոնք զինված ուժերի և ոստիկանության անդամներին տրամադրում են սույն Կոնվենցիայով նախատեսված ցանկացած իրավունքները:

Հոդված 6.

Սույն Կոնվենցիայի գործունեությունը չի տարածվում պետական ծառայողների վրա, և նա ոչ մի ձևով չի մեկնաբանվի որպես նրանց իրավունքների կամ դիրքի վնասի հասցնում:

Հոդված 7

Սույն Կոնվենցիայի վավերացման վերաբերյալ պաշտոնական փաստաթղթերը գրանցման համար ուղարկվում են Աշխատանքի միջազգային բյուրոյի Գլխավոր տնօրենին:

Հոդված 8

1. Սույն Կոնվենցիան կապում է Աշխատանքի միջազգային կազմակերպության միայն այն անդամներին, որոնց վավերացման վերաբերյալ փաստաթղթերը գրանցված են Գլխավոր տնօրենի կողմից:

2. Այն ուժի մեջ է մտնում տասներկու ամիս անց այն բանից հետո, երբ Գլխավոր տնօրենը գրանցի վավերացման վերաբերյալ կազմակերպության երկու անդամների փաստաթղթերը:

1. Հետագայում սույն Կոնվենցիան Կազմակերպության յուրաքանչյուր անդամի նկատմամբ ուժի մեջ է մտնում վավերացման վերաբերյալ նրա փաստաթղթի գրանցման օրվանից տասներկու ամիս անց:

Հոդված 9

1. Աշխատանքի միջազգային կազմակերպության Կանոնադրության հոդված 35-ի կետ 2-ին համապատասխան Աշխատանքի միջազգային բյուրոյի Գլխավոր տնօրենին

ուղարկված դիմումները բովանդակում են ցուցումներ ներքոշարադրյալի վերաբերյալ`

ա) տարածքները, որոնց նկատմամբ շահագրգռված Կազմակերպության անդամը պարտավորվում է կիրառել սույն Կոնվենցիայի դրույթները առանց փոփոխությունների,

բ) տարածքները, որոնց նկատմամբ նա պարտավորվում է կիրառել սույն Կոնվենցիայի դրույթները փոփոխություններով, և այդ փոփոխությունների, և այդ փոփոխությունների մանրամասները,

գ) տարածքները, որոնց նկատմամբ Կոնվենցիան չի կիրառվի, և այդ դեպքում չկիչառվելու պատճառները,

դ) տարածքները, որոնց նկատմամբ նա վերապահում է իր վորոշումը, ընդհուպ մինչև դրույթի հետագա վերանայումը:

2. Սույն հոդվածի կետ 1-ի ա) և բ) ենթակետերում հիշատակված պարտավորությունները համարվում են վավերացման վերաբերյալ փոստաթղթի մի անբաժանելի մասը և առաջ են բերում նրա հետ միանման հետևանքներ:

3. Կազմակերպության յուրաքանչյուր անդամ կարող է նոր հայտարարության միջոցով հրաժարվել այն բոլոր վերապահումներից կամ դրանց մի մասից, որոնք բովանդակում են նրա նախորդ հայտարարությունում, սույն հոդվածի կետ 1-ի բ), գ), դ), ենթակետերի ուժով:

4. Կազմակերպության յուրաքանչյուր անդամ այն ժամանակահատվածներում, որոնց ընթացքում սույն Կոնվենցիան կարող է չեղյալ հայտարարվել հոդված 11-ի դրույթներին համապատասխան, կարող է Գլխավոր տնօրենին ուղարկել նոր հայտարարություն, որը ցանկացած այլ առումով փոփոխի ցանկացած նախորդ հայտարարության պայմանները և հայտնի որոշակի տարածքներում գոյություն ունեցող դրույթի մասին:

Հոդված 10

1. Այն դիմումներում, որոնք ուղարկվում են Աշխատանքի միջազգային բյուրոյի Գլխավոր տնօրենին Աշխատանքի միջազգային կազմակերպության Կանոնադրության

հոդված 35-ի կետեր 4 և 5 –ի դրույթներին համապատասխան, նշվում է թե արդյոք սույն

Կոնվենցիայի դրույթները տվյալ տարածքում կկիրառվեն փոփոխություններով թե առանց փոփոխությունների: Այն դեպքում, երբ հայտարարությունում նշվում է, որ Կոնվենցիայի դրույթները կկիրառվեն փոփոխություններով, նրանում ճշտվում է, թե որոնք են հատկապես նշված փոփոխությունները:

2. Կազմակերպության շահագրգռված անդամը կամ անդամները, կամ միջազգային իշխանությունը կարող են ցանկացած ժամանակ նոր դիմումի միջոցով լիովին կամ մասնակիորեն հրաժարվել նախորդ որևէ դիմումում վերապահված փոփոխություններից օգտվելու իրավունքից:

3. Կազմակերպության շահագրգռված անդամը կամ անդամները, կամ միջազգային իշխանությունը այն ժամանակահատվածներում, երբ Կոնվենցիան կարող է չեղյալ հայտարարվել հոդված 11-ի դրույթներին համապատասխան, կարող են Գլխավոր տնօրենին նոր հայտարարություն ուղարկել, որը ցանկացած այլ առումով փոփոխի ցանկացած նախորդ դիմումի պայմանները և հայտնի այդ կոնվենցիայի

կիրառման նկատմամբ գոյություն ունեցող դրության մասին:

Հոդված 11

1. Կազմակերպության յուրաքանչյուր անդամ, որը վավերացրել է սույն Կոնվենցիան, կարող է նրա սկզբնապես ուժի մեջ մտնելու պահից սկսած տասնամյա ժամանակահատվածը լրանալուց հետո այն չեղյալ հայտարարել չեղյալ հայտարարման

վերաբերյալ ակտի միջոցով, որն ուղարկվում է Միջազգային բյուրոյի Գլխավոր տնօրենին և գրանցվում է նրա կողմից: Չեղյալ հայտարարումը ուժի մեջ է մտնում չեղյալ հայտարարման վերաբերյալ ակտի գրքանցումից մեկ տարի հետո:

2. Կազմակերպության յուրաքանչյուր անդամ, որը վավերացրել է սույն Կոնվենցիան և որը նախորդ կետում նշված տասնամյա ժամանակահատվածը լրանալուց հետո միամյա ժամկետում չի օգտվի սույն հոդվածում նախատեսված չեղյալ

հայտարարման իր իրավունքից, կապված կլինի հաջորդ տասնամյա ժամանակահատվածում և որպես արդյունք կկարողանա սույն Կոնվենցիան չեղյալ հայտարարել յուրաքանչյուր տասնամյա ժամկետ լրանալուց հետո այն կարգով, որը սահմանված է սույն հոդվածով:

Հոդված 12

1. Աշխատանքի միջազգային բյուրոյի Գլխավոր տնօրենը Աշխատանքի միջազգային կազմակերպության բոլոր անդամներին տեղեկացնում է Կազմակերպության անդամներից իր ստացած վավերացման վերաբերյալ բոլոր փաստաթղթերի, դիմումների և չեղյալ հայտարարման վերաբերյալ բոլոր ակտերի գրանցման մասին:

2. Կազմակերպության անդամներին տեղեկացնելով իր ստացած վավերացման վերաբերյալ երկրորդ փաստաթղթի գրանցման մասին՝ Գլխավոր տնօրենը նրանց ուշադրությունը հրավիրում է սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու թվականի վրա:

Հոդված 13

Աշխատանքի միջազգային բյուրոյի Գլխավոր տնօրենը Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության հոդված 102-ին համապատասխան գրանցման համար Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ուղարկում է

ամբողջական տեղեկություններ վավերացման, դիմումների և չեղյալ հայտարարման վերաբերյալ բոլոր ակտերի վերաբերյալ բոլոր փաստաթղթերի մասին, որոնք իր կողմից գրանցվո են նախորդ հոդվածների դրույթներին համապատասխան:

Հոդված 14

Աշխատանքի միջազգային բյուրոյի Վարչական խորհուրդն ամեն անգամ, երբ դա ահրաժեշտ է համարում, Գլխավոր խորհրդաժողովին զեկուցագիր է ներկայացնում սույն Կոնվենցիայի կիրառման մասին և որոշում է, թե պետք է արդյոք խորհրդաժողովի

օրակարգում հարց մտցնել նրա լրիվ կամ մասնակի վերանայման մասին:

Հոդված 15

1. Այն դեպքում, եթե խորհրդաժողովն ընդունի նոր կոնվենցիա, որն ամբողջովին կամ մասնակիորեն կվերանայի սույն Կոնվենցիան, և եթե նոր կոնվենցիայում նախատեսված չէ հակառակը, ապա`

ա) Կազմակերպության որևէ անդամի կողմից նոր վերանայող կոնվենցիայի վավերացումը ինքնաբերաբար, անկախ հոդված 11-ի դրույթներից, առաջ է բերում սույն Կոնվենցիայի անհապաղ չեղյալ հայտարարում այն պայմանով, որ նոր վերանայող

կոնվենցիան ուժի մեջ մտած լինի,

բ) նոր, վերանայող կոնվենցիան ուժի մեջ մտնելու օրվանից սկսած սույն Կոնվենցիան փակ է Կազմակերպության անդամների կողմից վավերացման համար:

2. Սույն Կոնվենցիան բոլոր դեպքերում ըստ ձևի և բովանդակության մնում է ուժի մեջ Կազմակերպության այն անդամների նկատմամբ, որոնք այն վավերացրել են,

բայց նոր, վերանայող կոնվենցիան չեն վերանայել:

Հոդված 16

Սույն Կոնվենցիայի անգլերեն և ֆրանսերեն տեքստերը հավասարազոր են:

Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 2003թ. սեպտեմբերի 24-ին, ուժի մեջ է մտել 2004թ. նոյեմբերի 11-ին